

**ԾՐԱԳԻՐ**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ**  
**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**  
**2002 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովն (այսուհետև՝ հանձնաժողով) էներգետիկայի բնագավառում կարգավորող մարմին է, որը գործում է «էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում:

«էներգետիկայի մասին» ՀՀ օրենքով (7 մարտի 2001թ.) զգալիորեն հստակեցված իրավասությունների շրջանակում հանձնաժողովն իրականացնում է հետևյալ հիմնական գործառույթները.

ա) գործունեության լիցենզավորում, լիցենզիայի պայմանների սահմանում և դրանց վերահսկում,

բ) լիցենզավորված անձանց համար հաշիվների, ենթահաշիվների ներդրում՝ համաձայն ազգային հաշվային պլանի, հաշվապահական հաշվառմանն առնչվող օրենքների և իրավական ակտերի,

գ) գործունեության լիցենզիա ունեցող անձանց միջև, ինչպես նաև սպառողների հետ կնքվող էներգիայի և(կամ) բնական գազի մատակարարման և ծառայությունների մատուցման պայմանագրերի օրինակելի ձևերի կամ պարտադիր պայմանների սահմանում, գործունեության լիցենզիա ունեցող անձանց միջև կնքված, ինչպես նաև էլեկտրական էներգիայի ու բնական գազի ներկրման և արտահանման պայմանագրերի գրանցում,

դ) էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի, էներգետիկայի բնագավառում հաղորդման, բաշխման համակարգի օպերատորի, էլեկտրաէներգետիկական շուկայի ծառայությունների մատուցման կարգավորվող սակագների, ինչպես նաև էլեկտրական էներգիայի և բնական գազի ներկրման առավելագույն սակագների սահմանում,

ե) էներգակիրների մատակարարման և օգտագործման կանոնների մշակում, կիրառում, շուկայի կանոնների և կարգերի սահմանում,

զ) իր իրավասությունների շրջանակում իրավական ակտերի սահմանում, կատարման վերահսկողություն,

է) սպասարկման որակի նկատմամբ պահանջների սահմանում,

ը) ապագա սակագներում ներդրումների ներառման կամ մերժման նպատակով գործունեության լիցենզիա ունեցող անձանց կողմից ներկայացվող զարգացման ներդրումային ծրագրերի ուսումնասիրում

թ) էներգակիրների պահանջարկի և ծառայությունների մատուցման սակագների մերձակա և տեսանելի հեռանկարային կանխատեսումների մշակում:

Հանձնաժողովն իր գործունեությունը կազմակերպում է աշխատակազմի միջոցով (52 աշխատող), որն ունի հետևյալ կառուցվածքային ստորաբաժանումները.

Սակագնային քաղաքականության վարչություն

- սակագնային բաժին
- ֆինանսական վերլուծության բաժին

Իրավաբանական և լիցենզիոն մոնիթորինգի վարչություն

- իրավաբանական-լիցենզիոն բաժին
- լիցենզավորված գործունեության մոնիթորինգի բաժին

Հասարակության հետ կապերի բաժին

Գործերի կառավարչություն

### ***1. Սակագնային քաղաքականություն***

Սակագնային քաղաքականության հիմքում դրվում են գնագոյացման այնպիսի մեխանիզմներ, որոնք կհանգեցնեն տնտեսապես հիմնավորված և երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակին համապատասխանող սակագների ձևավորմանը:

Տնտեսապես հիմնավորված սակագները պետք է ապահովեն բնագավառի տնտեսավարող սուբյեկտների բնականոն տնտեսական գործունեությունը՝ միաժամանակ հնարավորություն ընձեռելով իրականացնել արդիականացման և հեռանկարային զարգացման ծրագրեր: Սակագների՝ հասարակության կողմից

ընդունելիության գաղափարը անմիջապես առնչվում է սոցիալ-տնտեսական իրավիճակի հետ, որը կարող է էապես ազդել այնպիսի ցուցանիշների վրա, ինչպիսիք են վճարումների կարգապահությունը, պահանջարկի մեծությունը և այլն:

Տնտեսության անցումային փուլով պայմանավորված՝ բնակչության ցածր կենսամակարդակը, արդյունաբերության ներկա վիճակը, իրական գործազրկության մակարդակը զգալիորեն բարդացնում են բնական մենաշնորհային բնագավառներում սակագնային քաղաքականության: Արտադրող-սպառող բազմօղակ շղթայում հակասական տնտեսական շահերի հավասարակշռումը դառնում է կարգավորող մարմնի հիմնական խնդիրը, որի տրամաբանական լուծումից է կախված ոչ միայն հետագա բարգավաճման, այլ նաև բնագավառի գոյատևման հարցը: Սակագների ձևավորման պարզության, թափանցիկության, կայունության պահանջները լրացուցիչ խնդիրներ են դնում կարգավորող մարմնի առջև:

Էներգետիկայում ներկայումս կիրառվող սակագնային քաղաքականությունը հիմնվում է համաշխարհային պրակտիկայում ընդունված անհրաժեշտ հասույթի ապահովման սկզբունքի վրա: Անհրաժեշտ հասույթն ընդգրկում է.

- էներգետիկական ընկերությունների անվտանգ և հուսալի գործունեության համար անհրաժեշտ շահագործման և պահպանման ծախսերը,
- օգտակար և օգտագործվող հիմնական միջոցների իրատեսական ծառայության ժամկետի վրա հիմնված հաշվարկային մաշվածության հատուցումը,
- ընկերությունների ակտիվներից խելամիտ շահույթը:

Սակագների աճի զսպման սկզբունքային դրույթից ելնելով՝ շահագործման և պահպանման ծախսերի մեջ ներառվում են նվազագույն անհրաժեշտ վերանորոգման ծախսերը:

Հաշվի առնելով էներգահամակարգի արտադրական հզորությունների օգտագործման ցածր աստիճանը, ամորտիզացիոն հատկացումները հաշվարկվում են օգտակար և օգտագործվող ակտիվների համար՝ նվազագույն նորմերով (1.5÷2.5% վերագնահատված սկզբնական արժեքի նկատմամբ):

Էլեկտրաէներգիայի բնագավառում մասնավոր ներդրումների համար ընդունելի և գրավիչ շահութաբերության նորման գնահատվում է 15-16%: Ենթադրվում է, որ

շահութաբերության նորմայի այդպիսի մակարդակը կխրախուսի ներդրումների ներգրավումը արտադրության ոլորտ: Փոքր ՀԷԿ-երի փորձը, համենայնդեպս, խոսում է հոգուտ այդ մոտեցման: Առ այսօր հանձնաժողովը տրամադրել է 24,25 ՄՎտ ընդհանուր դրվածքային հզորությամբ և 124,25 մլն կՎտժ տարեկան արտադրությամբ փոքր ՀԷԿ-երի կառուցման լիցենզիաներ: Ներկայումս կառուցման փուլում են գտնվում շուրջ մեկ տասնյակ փոքր ՀԷԿ-եր:

Շուկայական հարաբերությունների (այդ թվում՝ ֆինանսական շուկայի) զարգացմանը զուգընթաց, բնականաբար, այս մոտեցումները որոշակի փոփոխություններ կկրեն: Հատկապես, խելամիտ նորմաներ կծնավորվեն ֆինանսական շուկայի կայացումից և կապիտալի արժեքի ձևավորումից հետո:

Սակագների ճկունության ապահովումը սակագնային քաղաքականության կարևոր սկզբունքներից մեկն է: Սպառողական խմբերի առանձնահատկությունները, ժամանակային, աշխարհագրական, կլիմայական և այլ գործոններ հաշվի առնող սակագներն ի վիճակի են ապահովելու էներգատեղակայանքների արդյունավետ աշխատանքը, պահանջարկի կայուն աճը, էներգիայի սպառման գրաֆիկների կանխատեսելիությունը: Մասնավորապես, էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության դեպքում, սահող սակագնի կիրառումը հնարավորություն է ընձեռում ավելի արագ արձագանքել Հայաստանի զգայուն (հատկապես՝ ջերմային էներգիայի նկատմամբ) շուկայի պահանջներին:

Վարվող քաղաքականության մեջ այլ սկզբունքն է սակագների տարանջատումն ըստ մատուցվող ծառայությունների տեսակի՝ էներգիայի առաքում, գազաթնային բեռնվածքի ծածկում, ռեակտիվ հզորության արտադրություն, պահուստային հզորության ապահովում և այլն: Բազմադրույք սակագներին անցման ճանապարհին որպես առաջին քայլ պետք է գնահատել արտադրող (էլեկտրակայաններ) - մեծածախ գնորդ («Հայէներգ») օղակում երկդրույք սակագների ներդրման փաստը: Էլեկտրաէներգիայի և հզորության համար առանձնացվող սակագնային դրույքները համապատասխանաբար հաշվի են առնում շահագործման և պահպանման փոփոխական (արտադրած էլեկտրաէներգիայի քանակությունից կախված) և հաստատուն ծախսերը:

Երկդրույք սակագնային համակարգի ներդրման նպատակներն են.

- ա) ապահովել հաստատուն ծախսերի (աշխատավարձ, նորոգումներ և այլն) փոխհատուցումն՝ անկախ արտադրվող էներգիայի քանակությունից և ռեժիմներից,
- բ) ապահովել փոփոխական ծախսերի (վառելիք, ջուր, քիմիկատներ և այլն) փոխհատուցումը, որոնք անմիջապես կախված են արտադրվող էներգիայի քանակությունից,
- գ) մեղմացնել սակագների հաշվարկների հիմքում դրվող և փաստացի արտադրված էներգիայի քանակությունների անխուսափելի տարբերության ազդեցությունը արտադրող ընկերությունների կողմից ստացվող շահույթի (վնասի) վրա,
- դ) աստիճանաբար հրաժարվել էներգիայի արտադրության սահմանափակումների (քվոտա) սահմանման վիճահարույց պրակտիկայից,
- ե) բարձրացնել կարգավարական կարգապահությունը:

Էլեկտրաէներգիայի երկդրույք սակագնային համակարգը խոշոր արտադրող և տեղափոխող ընկերությունների համար գործում է 2001թվականի մայիսի 1-ից: Համակարգն առայժմ չի կիրառվում փոքր ՀԷԿ-երի համար, սակայն այդ կայանների՝ ընթացիկ տարվա գործունեության արդյունքների վերլուծությունը կպատասխանի դրանցում 2002 թվականից երկդրույք սակագնային համակարգի կիրառման նպատակահարմարության հարցին:

Երկդրույք սակագնային համակարգն առայժմ չի տարածվում նաև բաշխիչ ցանցերի վրա, որոնք շարունակում են մեծածախ գնումներն իրականացնել միադրույք (դր/կՎտժ) սակագներով: 2002 թվականի արդյունքներով երկդրույք համակարգը կտարածվի նաև բաշխիչ ցանցերի, իսկ հետագա տարիներին՝ նաև խոշոր արդյունաբերական սպառողների վրա: Այդ հետաձգումը պայմանավորված է օգտագործվող էլեկտրական հզորության (կՎտ) անհրաժեշտ հաշվառման համակարգի բացակայությամբ, որի ստեղծումն այժմ մոտենում է ավարտին:

Էլեկտրական էներգիայի մեծածախ շուկայի՝ նախատեսվող փոփոխությունների հետևանքով որոշակի փոփոխությունների կենթարկվի նաև սակագնային համակարգը: Շուկայի նոր կառուցվածքի ներդրման հետ համարել անհրաժեշտ կլինի համակարգային տարանջատված ծառայությունների համար 2002 թվականի ընթացքում ներդնել սակագների նոր տեսակներ: Այդ ծառայություններն իրականացնող օղակները (համակարգի օպերատոր, հաշվարկային կենտրոն, պայմանագրային կենտրոն) արդեն ստեղծվել են, սակայն առայժմ գործում են «Հայէներգո» ՓԲԸ-ի կազմում:

«Էներգետիկայի մասին» և «Բաշխիչ ցանցերի մասնավորեցման մասին» ՀՀ օրենքների ընդունումից հետո հրատապ է դարձել էլեկտրական էներգիայի բաշխման և մատակարարման գործառույթների տարանջատումն ու սակագների հաշվարկման համապատասխան մեթոդի մշակումը: Նոր մեթոդաբանություն է անհրաժեշտ նաև սպառողների կողմից ենթասպառողներին էլեկտրական էներգիայի մատակարարման համար կատարվող ծախսերի որոշման և բաշխիչ ցանցերի կողմից դրանց հատուցման համար:

Որոշակի փոփոխությունների կենթարկվի բնական գազի ոլորտում իրականացվող սակագնային քաղաքականությունը: Այստեղ նախատեսվում է տարանջատել գազի տեղափոխման, բաշխման և մատակարարման գործառույթներն ու կանոնակարգել նոր բաժանորդների միացման խնդիրները, սահմանելով համապատասխան սակագներ:

Ելնելով «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի՝ տեղական էներգիայի պաշարների արդյունավետ օգտագործման դրույթներից, հանձնաժողովը նախատեսում է 2002 թվականից վերանայել փոքր հիդրոէներգետիկայի համար ներկայումս գործող արտադրության սահմանային (3 ԱՄՆ ցենտ/կՎտժ՝ առանց ԱԱՀ-ի) սակագինը, որն իր դերը կատարել է՝ խրախուսելով գոյություն ունեցող ենթակառուցվածքների օգտագործմամբ ամենաարդյունավետ փոքր ՀԷԿ-երի կառուցումը: Այդ սահմանային սակագնի շուրջ 1,3-1,5 անգամ բարձրացումը կնպաստի մասնավոր ներդրումների ներգրավմանը փոքր գետերի վրա ավելի մեծ ներդրումներ պահանջող ՀԷԿ-երի կառուցման գործընթացին:

Այս վերջին բնագավառում, 2000 թվականից սկսած, նկատելի է մասնավոր ներդրողների բուռն աշխուժացում՝ տարբեր ներդրողների շահերի բախման նախադեպերով: Այդ կապակցությամբ հանձնաժողովը նախատեսում է 2002 թվականի ընթացքում.

- ՀՀ էներգետիկայի նախարարության հետ համատեղ ձեռնարկել անհրաժեշտ քայլեր՝ «Հայաստանի փոքր հիդրոէներգետիկայի զարգացման սխեմային» պետական կամ կառավարական ծրագրի կարգավիճակ շնորհելու համար,
- ավարտել փոքր գետերի վրա մասնավոր ներդրողների կողմից փոքր ՀԷԿ-երի կառուցման հայտերի որակավորման մրցութային չափանիշների մշակումը,
- ձեռնարկել փոքր ՀԷԿ-երի կառուցման հայտերի մրցութային պայմանների և անցկացման ընթացակարգի մշակումը:

2002 թվականին ակնկալվում է Հայաստանի համար միանգամայն նոր տեսակի արտադրողների մուտք էլեկտրաէներգետիկական համակարգ: Խոսքը ցանցային (ընդհանուր էներգահամակարգին միացված) հողմաէներգետիկայի մասին է, որի շուրջ երկու տարի ընթացող պաշարագիտական հետազոտությունները բացահայտել են առնվազն 3 հարթակներ (Սոտք, Պուշկինի և Քարախաչի լեռնանցքներ), որոնցում գումարային շուրջ 150-160 ՄՎտ հզորությունների տեղադրումը համարվում է տնտեսապես իրատեսական: Թե՛ սակագնի ձևավորման, թե՛ կարգավորման իրավական հարցերի առումներով հողմաէներգետիկան օժտված է առանձնահատկություններով, որոնք պետք է հաշվի առնվեն համապատասխան նորմատիվ փաստաթղթերի մշակման ընթացքում: «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքը բարենպաստ պայմաններ է ստեղծում էներգիայի վերականգնվող աղբյուրների հիման վրա արտադրվող էլեկտրաէներգիայի վաճառքի առումով՝ երկարաժամկետ հեռանկարում: Սակագնային և լիցենզիոն բարենպաստ պայմաններում ներդրումների հոսքն այս բնագավառ միանգամայն իրական ուրվագծեր է ձեռք բերում:

## ***2. Լիցենզավորում և լիցենզավորված գործունեության հսկողություն***

Համաձայն «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի, էներգետիկայի բնագավառի կարգավորումը պետական քաղաքականության մի մասն է, որն իրականացնում է հանձնաժողովը:

Ելնելով օրենքում ամրագրված կարգավորման հիմնական սկզբունքներից, հանձնաժողովն իրականացնում է սպառողների և էներգետիկայի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց շահերի հավասարակշռումը, բացառելով խտրականությունը սպառողների կամ որևէ լիցենզավորված անձի նկատմամբ: Այդ աշխատանքները իրականացվում են կարգավորման հիմնական միջոցներով, որոնցից են էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորումը, գործունեության լիցենզիայի պայմանների սահմանումն ու դրանց վերահսկումը:

Լիցենզավորման բնագավառում հանձնաժողովի վարած հավասարակշռված քաղականությունը այն գործոններից մեկն է, որի շնորհիվ զգալիորեն ավելացել են ներդրումների ծավալները, հատկապես փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման ոլորտում: Վերլուծելով լիցենզավորման գործնթացում ձեռք բերած փորձը և հաշվի առնելով այդ բնագավառի զարգացման առանձնահատկությունները, հանձնաժողովը նպատակ ունի պարզեցնել լիցենզավորման գործընթացը, ձգտելով պակասեցնել պահանջվող փաստաթղթերի քանակը, շեշտը դնելով լիցենզիայի պայմանների կատարման հանձնաժողովի կողմից իրականացվող մոնիթորինգի արդյունքների վրա: Դա կհարկադրի տնտեսավարող սուբյեկտներին ավելի մեծ պատասխանատվությամբ մոտենալ լիցենզավորված գործունեության կազմակերպմանն ու իրականացմանը:

Հաշվի առնելով, որ համաձայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի, լիցենզավորված անձին գործունեության լիցենզիայի հետ մեկտեղ տրվում է լիցենզիայի պարտադիր պահանջները կամ պայմանները սահմանող իրավական ակտերի և օրենքների ցանկը, հանձնաժողովը, հիմնվելով սեփական ուսումնասիրությունների և վերլուծությունների վրա, հստակեցրել է լիցենզավորման հետ կապված անհրաժեշտ թույլտվությունների նորմատիվ տեխնիկական և իրավական հիմքերը: Նշված աշխատանքները թույլ կտան էներգետիկայի ոլորտում ներդրում կատարելու ցանկություն ունեցող տնտեսավարող սուբյեկտների համար հնարավորինս հստակեցնել և կանոնակարգել ՀՀ օրենսդրությամբ սահմանված



անհրաժեշտ թույլտվությունների ցանկը, նվազեցնել դրանց ստացման տևողությունը և պետական մուծումների /ծառայությունների դիմաց վճարներ/ ընդհանուր չափը:

Գործակցելով պետական այլ մարմինների հետ, 2002 թվականի ընթացքում աշխատանքներ կտարվեն տնտեսավարող սուբյեկտների գործունեության պետական հսկողության և դրա ուղղությունների հստակեցման առումով, նպատակ ունենալով կոնկրետացնել պետական հսկողության տարածման սահմանները, ձևերը, ժամկետները, ճշտել այն իրականացնող պետական մարմինների ցանկը: Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում էներգետիկայի բնագավառի զարգացման հայեցակարգի մշակումը, որի հիմքում պետք է լինեն այդ բնագավառի վերաբերյալ ներկայումս ՀՀ-ում գործող ենթաօրենսդրական ակտերը: Այդ փաստաթղթի առկայությունն ավելի գործնական բնույթ կհաղորդի էներգետիկայի զարգացման ծրագրերին:

Հանձնաժողովը մշակում է էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման նոր կարգ, որտեղ հաշվի կառնվեն «էներգետիկայի մասին» ՀՀ օրենքով ամրագրված դրույթները, նպատակ ունենալով խթանել հանրապետության էներգետիկական անկախությունը և, մասնավորապես, նպաստել էներգիայի այլընտրանքային և վերականգնվող աղբյուրների արդյունավետ օգտագործմանը և դրան ուղղված տնտեսական ու իրավական մեխանիզմների կիրառմանը:

2002 թվականին հանձնաժողովի ուշադրության կենտրոնում է լինելու բաշխիչ ցանցերի սպասարկման որակի նկատմամբ պահանջների հստակեցումը:

Ելնելով «էներգետիկայի մասին» ՀՀ օրենքից, հանձնաժողովը հաջորդ տարի կմշակի նորմատիվ ակտերի շարք, մասնավորապես՝ էներգետիկական շուկայի կանոնները, գործունեության լիցենզիա ունեցող անձանց կողմից ներկայացվող զարգացման ներդրումային ծրագրերի հաստատման, սակագների սահմանման և վերանայման, տույժերի կիրառման, լիցենզավորված անձանց միջև ծագած տարաձայնությունների քննարկման կարգերը և այլն:

Հանձնաժողովը շարունակելու է ուշադրության կենտրոնում պահել լիցենզավորված անձանց կողմից լիցենզիայի պայմանների կատարման հսկողությունը, որն անհրաժեշտ է էներգետիկական շուկայում մրցակցային միջավայրի ապահովման, էներգետիկայի բնագավառի անվտանգության ապահովման, լիցենզավորված ընկերությունների գործառնական կարգապահության

բարձրացման առումներով: Հանձնաժողովի կողմից կատարվող մոնիթորինգը թույլ է տալիս կարգավորել և հետևել լիցենզավորված ընկերությունների կողմից հիմնական միջոցների նպատակային ձեռքբերմանը, նպաստել ընկերությունների տեխնիկական վերազինման գործընթացին՝ խրախուսելով միջազգային շուկայում առկա նոր՝ էներգաարդյունավետ և էներգախնայող տեխնոլոգիաների ներդրումը: Լիցենզավորված ընկերությունների գործունեության մոնիթորինգը կարևոր է նաև հիմնավորված սակագների սահմանման տեսանկյունից, քանի որ թույլ է տալիս ճշգրտել լիցենզավորված ընկերությունների հիմնական գործունեությունն ապահովող հիմնական միջոցները, գնահատել էներգահամակարգում անհրաժեշտ հզորությունների ապահովման համար պահպանման ու շահագործման ծախսերը, հիմնավորված տեխնիկական ու առևտրային կրուստների մեծությունները, սակագնում ներառվող ամորտիզացիոն մասհանումները և շահույթի բազան:

Հանձնաժողովը շարունակելու է իրականացնել նաև լիցենզավորման հայտերով ներկայացվող ֆինանսատնտեսական փաստաթղթերի մոնիթորինգը, որի նպատակն է իրատեսորեն գնահատել կապիտալ ներդրումների ծավալները, շահագործման և պահպանման ծախսերի ցուցանիշները: Խորացվելու է զարգացման ներդրումային ծրագրերի վերլուծությունը՝ ապագայում սպառողներին մատակարարվող էլեկտրաէներգիայի սակագների կտրուկ աճի բացառման, էներգիայի հուսալի, անվտանգ մատակարարման և բարձրորակ ծառայությունների մատուցման նպատակով:

Տնտեսավարող ընկերությունների կողմից ներկայացվող հաշվետվությունների վերլուծության հիման վրա կգնահատվի սպառողներին մատուցվող ծառայությունների որակը, որը թույլ կտա ձեռնարկել արդյունավետ միջոցներ՝ սպառողների էներգամատակարարման չհիմնավորված դադարեցումների կանխման, նրանց դիմում-բողոքներին արձագանքելու ժամանակահատվածի կրճատման, մատակարարված էներգիայի որակը չպահպանելու հետևանքով սպառողներին հասցված վնասի փոխհատուցման ուղղությամբ:

Լիցենզավորված ընկերությունների գործունեության մոնիթորինգն ավելի մանրամասն և խորությամբ իրականացնելու նպատակով հանձնաժողովը կշարունակի միջազգային շուկայում առաջարկվող նոր էներգակայանքների և ընկերություններում առկա հիմնական միջոցներին վերաբերող տեղեկատվական բազաների համալրումը:

«Էներգետիկայի մասին» ՀՀ նոր օրենքի ընդունումից հետո, էլնելով մատակարար-սպառող փոխհարաբերությունների իրավական դաշտի հրատապ կանոնակարգման, կողմերի իրավունքների և պարտականությունների շրջանակների սահմանման անհրաժեշտությունից, արդեն գործողության մեջ են դրվել էլեկտրական, ջերմային էներգիայի ու բնական գազի մատակարարման և օգտագործման ժամանակավոր կանոնները: Այժմ, ուսումնասիրելով տարբեր երկրներում համանման կանոնների կիրառման սկզբունքները, հաշվի առնելով ժամանակավոր կանոններում չընդգրկված կարգավորվող շուկայական հարաբերություններից բխող արդիական պահանջները, ինչպես նաև շահագրգիռ նախարարությունների, գերատեսչությունների, իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից ներկայացված դիտողություններն ու առաջարկությունները, նախապատրաստվում են դրանց լրամշակված տարբերակները, որոնք կհաստատվեն 2002 թվականի առաջին կիսամյակի ընթացքում:

### **3. Լիցենզավորված ընկերությունների գործունեության ֆինանսատնտեսական վերլուծություն**

Էներգետիկայի բնագավառի լիցենզավորված ընկերությունների գործունեության ֆինանսատնտեսական վերլուծությունը հանձնաժողովի առաջնային խնդիրներից մեկն է:

Համաձայն «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի՝ լիցենզավորված անձինք ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի կողմից սահմանված ձևերով և կարգով հաշվետվություններ են ներկայացնում իրենց գործունեության վերաբերյալ:

Էներգահամակարգի ընկերությունների գործունեության ֆինանսատնտեսական վերլուծությունը նպատակաուղղված է՝

- սակագնային քաղաքականության վարման համար անհրաժեշտ տեղեկատվական բազայի ստեղծմանը,
- լիցենզավորման և լիցենզիայի պայմանների վերահսկման գործառույթների իրականացմանը,
- լիցենզավորված անձանց գործունեության արդյունավետության և ֆինանսատնտեսական վիճակի կանխատեսումային գնահատմանը:

Էներգետիկայի բնագավառի ընկերությունների 2000 թվականի գործունեության համառոտ վերլուծության արդյունքներով հանրապետությունում արտադրվել է 5957,6 մլն կՎտժ էլեկտրական էներգիա, որից արտադրող կայաններում սեփական կարիքների համար օգտագործվել է 391,0 մլն կՎտժ կամ (6,6 %), կայաններից օգտակար առաքումը կազմել է 5566,6 մլն կՎտժ (տես [հավելված 1](#)): Բարձր լարման ցանց մուտք է գործել 5918,7 մլն կՎտժ՝ ներառյալ էլեկտրաէներգիայի ներհոսքը՝ 352,0 մլն կՎտժ: Բարձր լարման ցանցերում տեխնոլոգիական կորուստները կազմել են 337,5 մլն կՎտժ կամ 5,7%: Բարձր լարման ցանցից էլեկտրաէներգիայի առաքումը կազմել է 5581,2 մլն կՎտժ, որից 4742,1 մլն կՎտժ մատակարարվել է բաշխիչ ցանցերին, 24,2 մլն կՎտժ՝ ուղիղ սպառողներին (կայանների տնտեսական կարիքներ), իսկ 814,9 մլն կՎտժ կազմել են արտահոսքը և արտահանումը: Բաշխիչ ցանցերում փաստացի կորուստները կազմել են 1167,1 մլն կՎտժ (24,6% ցանցերի մուտքի նկատմամբ), որից տեխնոլոգիական կորուստները՝ 539,3 մլն կՎտժ (11,37%), գերնորմատիվային կորուստները՝ 627,78 մլն կՎտժ (13,24%): Գույքագրված առաքումը բաշխիչ ցանցերից կազմել է 3575,01 մլն կՎտժ:

Բաշխող ընկերությունների կողմից սպառողներին առաքված էլեկտրական էներգիայի իրական ծավալը կազմել է 4202,79 մլն կՎտժ, որը «Հայէներգո» ՓԲԸ-ից գնված էլեկտրական էներգիայի քանակն է (4742,1 մլն կՎտժ)՝ հանած տեխնոլոգիապես անխուսափելի (նորմատիվային) կորուստները՝ 539,3 մլն կՎտժ: Բաշխող ընկերությունների հասույթը կազմել է 75,83 մլրդ դրամ (էլեկտրական էներգիայի վաճառքի միջին սակագինը՝ 21,22 դրամ/կՎտժ): Այսինքն, միայն գերկորուստների հետևանքով համակարգը չի ստացել 13,3 մլրդ դրամ: Համակարգի իրական վնասն ավելին է, քանի որ հաշվարկը կատարվել է միջին սակագնով, իսկ գերնորմատիվային կորուստները իրականում առաջանում են 0,38 կՎ լարման ցանցերում, որտեղ իրացման սակագինը կազմում է 25,0 դրամ:



2000 թվականի գործունեության արդյունքում բաշխող ընկերությունների փաստացի հավաքագրումը կազմել է 59,1 մլրդ դրամ կամ գույքագրված ապրանքային առաքման 78% կամ իրականում սպառողներին առաքված էլեկտրական էներգիայի դիմաց սպասվող հասույթի 66%-ը:

Այսպիսով, չվճարումների և գերնորմատիվային կորուստների պատճառով բաշխող ընկերությունները, իսկ որպես հետևանք՝ նաև ողջ համակարգը, չեն ստացել մոտ 30,0 մլրդ դրամ: Չվճարումների և գերնորմատիվային կորուստների պատճառով չստացված միջոցները իրենց բացասական ազդեցությունն են ունեցել ամբողջ համակարգի ընկերությունների ֆինանսական վիճակի վրա:

Ստորև ներկայացվում է էլեկտրական էներգիայի համակարգի ընկերությունների՝ սակագնով սահմանված և փաստացի հաշվեգրված շահագործման և պահպանման ծախսերի կառուցվածքը.

*սակագնով սահմանված*

*փաստացի հաշվեգրված*



Ֆինանսական միջոցների բացակայության պատճառով չեն կատարվել հիմնականում նորոգման և նյութական ծախսերը, ինչն իր հերթին անդրադառնում է էլեկտրական էներգիայի հուսալի և անվտանգ արտադրության, հաղորդման և բաշխման գործընթացների ապահովման վրա:

Բաշխող ցանցերում գոյություն ունեցող թերզանձումների և գերնորմատիվային կորուստների պատճառով համակարգի մյուս օղակների նկատմամբ

պարտավորությունների չկատարումը փոխադարձ շղթա է առաջացրել բաշխող ցանցեր - «Հայէներգո» ՓԲԸ - ԲԷՑ - արտադրող կայաններ - բնական գազ մատակարարող ձեռնարկություններ համակարգում:

Այսպիսով, բաշխիչ ցանցերում առկա նշված թերությունների վերացումն անհետաձգելի խնդիր է, քանի որ իրավիճակի շտկմանն ուղղված գործողությունների հետաձգումը ծանր հետևանքներ կունենա ոչ միայն էներգետիկայի բնագավառի, այլ նաև հանրապետության ամբողջ տնտեսության համար:

Ջերմային էներգիայի և բնական գազի 2001թ. կանխատեսվող և 2000-2001թ.թ. փաստացի և սպասվող հաշվեկշիռները բերված են [2-րդ](#) և [3-րդ](#) հավելվածներում:

Հանձնաժողովում շարունակվելու է ֆինանսատնտեսական վերլուծության աշխատանքների կատարելագործումը: Անհրաժեշտ է այն ավելի ներդաշնակեցնել «էներգետիկայի մասին» ՀՀ նոր օրենքին և էներգետիկայի բնագավառում նոր հարաբերությունների (շուկայի կանոններ) ներդրմանը: Մասնավորապես, մշակվելու է ֆինանսական վերահսկման վերլուծության մի ամփոփ համակարգ, որն իր մեջ կներառի ազգայն հաշվային պլանին համապատասխանեցված և կարգավորմանը վերաբերող՝ նոր հաշիվների և ենթահաշիվների համակարգ, հաշվապահական հաշվառման քաղաքականության ուղղվածության և բացահայտումների նկատմամբ պահանջներ:

Կարգավորմանը վերաբերող նոր հաշիվների և ենթահաշիվների ներդրումը կբարձրացնի լիցենզավորված գործունեության վերահսկելիությունը: ՀՀ հաշվապահական հաշվառման նոր ստանդարտներին և նշված հաշվային միասնական պլանին համապատասխան՝ կմշակվեն ֆինանսական հաշվետվությունների և ֆինանսատնտեսական տեղեկատվությունների նոր ձևեր և ձևերի լրացման հրահանգներ, կներդրվեն ֆինանսական վերլուծության նոր մեթոդներ:

Ֆինանսատնտեսական վերահսկման և վերլուծության նոր մոդելների մշակումը նպատակաուղղված կլինի ֆինանսական հաշվետվությունների կազմման կանոնների և մեթոդների բարելավմանն ու կարգավորման սկզբունքներին ներդաշնակեցմանը:

2002 թվականի առաջնահերթ խնդիրներից է լինելու «էներգետիկայի մասին» ՀՀ օրենքով հանձնաժողովին վերապահված ֆինանսատնտեսական հաշվետվությունների ու տեղեկատվությունների հավաստիության ճշգրտման նպատակով լիցենզավորված անձանց գործունեության աուդիտի անցկացման հետ կապված ընթացակարգերի մշակումը և ներդրումը: Լիցենզավորված գործունեության աուդիտի անցկացման շնորհիվ կբարձրանան լիցենզավորված անձանց ֆինանսական հաշվետվություններում ներկայացվող տեղեկատվության հավաստիության աստիճանը և հաշվառման կարգապահությունը: Միաժամանակ, կշարունակվի հետևողական աշխատանքը ընկերությունների համապատասխան մասնագետներին կարգավորման տեսանկյունից հաշվապահական հաշվառման առանձնահատկությունների պարզաբանման ուղղությամբ:

Վերը նշված ձեռնարկումներն իրականացնելիս՝ օգտագործվելու է նաև այլ երկրների կարգավորող մարմինների և մասնագետների փորձը:

#### **4. ՀՀ էլեկտրաէներգետիկական շուկայի ներդրում**

ՀՀ էլեկտրաէներգետիկական շուկայի կազմավորումը էլեկտրաէներգետիկական համակարգի կառուցվածքային բարեփոխումների շրթայի կարևորագույն օղակներից մեկն է և նպատակ ունի ստեղծել տարբեր սեփականատերերին պատկանող ընկերությունների համատեղ գործունեությունն ապահովող միասնական համակարգ, որը՝

- ա) հավասար պայմաններ է ապահովում յուրաքանչյուր սուբյեկտի գործունեության համար,
- բ) ապահովում է համակարգի անվտանգությունը, հուսալիությունը և տեխնիկական միասնությունը.
- գ) ապահովում է հիմնավորված սակագներով սպառողների հուսալի էլեկտրամատակարարումն այսօր և ապագայում,
- դ) բարձրացնում է յուրաքանչյուր սուբյեկտի պատասխանատվության աստիճանը,
- ե) ապահովում է մրցակցային հավասար դաշտ՝ գործող և նոր գործարկվող էլեկտրաէներգիա արտադրող կայանների համար,

- զ) ապահովում է համակարգի ֆինանսական կայունությունը, որը մասնավոր ներդրումների համար անհրաժեշտ երաշխիքներից մեկն է,
- է) նպաստում է ֆինանսական հոսքերի կանոնակարգմանն ու թափանցիկության ապահովմանը, որոնց համար անհրաժեշտ նախադրյալները ստեղծվում են բաշխողների կողմից օրենքով սահմանված 100% վճարումների պայմանով:

Էլեկտրաէներգետիկական շուկայի ներդրման համար անհրաժեշտ են լայն նախապատրաստական աշխատանքներ, քանի որ շուկայի առկայությունը ենթադրում է պայմանագրային հարաբերությունների էական փոփոխություն և շուկայի տնտեսական կառավարման և կարգավարման ամբողջովին նոր համակարգի ներդրում:

Ընթացիկ տարում և 2002 թվականին հանձնաժողովը, շուկայի մասնակիցների հետ համատեղ, պետք է մշակի և ներդնի մի շարք նոր իրավական ակտեր: Նշենք դրանցից հիմնականների անվանումը և նկարագրությունը՝ որոնք պետք է կանոնակարգեն շուկայի մասնակիցների փոխհարաբերությունները.

**Փուլի պայմանագիր** - սահմանում է շուկայի կազմակերպական կառուցվածքը, վճարման մեխանիզմները, հստակեցնում է պայմանագրային կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ստեղծում է էլեկտրաէներգետիկական շուկայի մասնակիցների միություն.

**Հաղորդման ցանցին միացման եռակողմ պայմանագիր (Հաղորդման պայմանագիր)** - սահմանում է սպառողի, համակարգի օպերատորի և բարձրավոլտ էլեկտացանցերի (ԲԷՑ) միջև փոխհամաձայնեցված գործողություններ, կանոններ և ընթացակարգեր.

**Համակարգի օպերատորի ծառայությունների պայմանագիր** - սահմանում է համակարգի օպերատորի կողմից մատուցվող ծառայությունները՝ ներառյալ էլեկտրաէներգիայի մեծածախ շուկային վերաբերող պլանավորման, շահագործման, կարգավարման հաշվետվության ծառայությունները.

**Հաշվարկային կենտրոնի ծառայությունների պայմանագիր** - սահմանում է հաշվարկային կենտրոնի կողմից մատուցվող ծառայությունները, հաշվառման



տվյալների հավաքագրման համակարգի շահագործումը և պահպանումը, շուկայի բանկիրի համար դրամական հոսքերի վերաբերյալ հրահանգները.

**Պայմանագրային կենտրոնի ծառայությունների պայմանագիր** - սահմանում է պայմանագրային կենտրոնի կողմից մատուցվող ծառայությունները՝ ներառյալ ներքին շուկայի համակարգումը, տարածաշրջանային շուկայում բանակցությունների վարումը և այդ գործունեության վերաբերյալ հաշվետվությունների ներկայացումը.

**Շուկայի բանկիրի ծառայությունների պայմանագիր** - սահմանում է շուկայի բանկիրի կողմից մատուցվող ծառայությունները, տարանցիկ հաշիվների կազմակերպումը, բաշխող ընկերությունների կողմից 100% վճարումների ապահովման մեխանիզմները.

**Հաղորդման ծառայության պայմանագիր** - սահմանում է էլեկտրաէներգետիկական շուկայի մասնակիցների կողմից ԲԷՑ-ի տեղակայանքներից օգտվելու կանոնները, ԲԷՑ-ի պատասխանատվությունը՝ հաղորդման ցանցի անվտանգ և հուսալի աշխատանքն ապահովելու համար.

**Համակարգի օպերատորի լիցենզիա** - կանոնակարգում է էլեկտրաէներգիայի արտադրության և հաղորդման կարգավարումը.

**Պայմանագրային կենտրոնի (ՊԿ) լիցենզիա** - կանոնակարգում է էլեկտրաէներգիայի արտադրության և հաղորդման պայմանագրերի կնքման հարցերը.

**Հաշվարկային կենտրոնի (ՀԿ) լիցենզիա** - սահմանում է շուկային հաշվարկային ծառայություններ մատուցող կառույցի գործունեության կարգը և պայմանները.

**Էլեկտրաէներգիայի ներկրման (արտահանման) լիցենզիա** - կանոնակարգում է էլեկտրաէներգիայի ներկրման (արտահանման) գործառույթները.

**Շուկայի ընթացակարգերի հիմնական դրույթները** - սահմանում են արդի փուլում շուկայի լիարժեք մասնակից լինելու համար սուբյեկտներին ներկայացվող պահանջները:

Ծառայություններ մատուցող կառույցների՝ հաշվարկային կենտրոնի, համակարգի օպերատորի, պայմանագրային կենտրոնի և շուկայի բանկիրի համար

հանձնաժողովը պետք է սահմանի նոր սակագներ: Բացի այդ, հանձնաժողովը պետք է հաստատի շուկայի մասնակիցների կողմից մշակվելիք՝ էլեկտրաէներգիայի հաշվառման, ֆինանսական հաշվարկների, էներգետիկական տեղակայանքների շահագործման և մի շարք այլ կարգեր: Այս փաստաթղթերի մշակումն արդեն սկսված է, և նախատեսվում է ավարտել 2002 թվականի ապրիլին: Շուկայի մասնակիցների և ծառայություններ մատուցող կառույցների փոխհարաբերությունները կանոնակարգող փաստաթղթերի փաթեթի առկայությունը հնարավորություն կընձեռի աստիճանաբար անցում կատարել բարեփոխված էլեկտրաէներգետիկական կարգավորվող շուկայի:

### **5. Հասարակության և սպառողների հետ տարվող աշխատանքներ**

Հանձնաժողովի՝ հասարակության հետ տարվող աշխատանքի սկզբունքը հրապարակայնությունն ու լրատվության մատչելիությունն է: Աշխատանքներն ուղղված են հասարակական համաձայնության ինստիտուտի ձևավորմանն ու հետագա կատարելագործմանը: Հանձնաժողովը նախաձեռնում է հասարակական լուրջ արձագանք ունեցող խնդիրների լայն քննարկում՝ օգտագործելով ինչպես ՋԼՄ-ները, այնպես էլ հանդիպումներ հասարակական, քաղաքական կազմակերպությունների, սպառողների տարբեր միավորումների հետ:

Հանձնաժողովի նիստերը դռնբաց են: Արդեն ձևավորված ավանդույթի համաձայն՝ հանձնաժողովի նիստերին, բացի ուղղակի շահագրգիռ կողմերից, մասնակցում են նաև ՋԼՄ-ների, հասարակական կազմակերպությունների և միավորումների ներկայացուցիչները:

Հանձնաժողովի մշտական ուշադրության կենտրոնում գտնվող բողոքների և «հրատապ հեռախոս»-ի միջոցով բարձրացված հարցերի քննարկումներից ու համապատասխան լուծում տալուց զատ, հանձնաժողովի անդամներն ու աշխատակիցները մասնակցում են հասարակական զանազան միջոցառումների, որոնց ժամանակ բացատրական աշխատանք է տարվում սպառողներին իրենց իրավունքներին ծանոթացնելու, ինչպես նաև «էներգետիկայի մասին» ՀՀ նոր օրենքում կատարված փոփոխություններն և դրանցից բխող իրավական ակտերին իրազեկելու ուղղությամբ:

2002 թվականին ծրագրված է հասարակության հետ կապերի բաժնի անմիջական մասնակցությամբ իրականացնել լիցենզավորված անձանց միջև ծագած տարաձայնությունների քննարկման, ինչպես նաև էլեկտրական ու ջերմային էներգիայի և բնական գազի մատակարարման անխուսափելի սահմանափակումների հանգեցնող պայմաններում իրականացվելիք գործողությունների ծրագրի մշակումն ու նրա պատշաճ ներկայացումը շահագրգիռ կողմերին և հասարակությանը:

Հաշվի առնելով, որ էներգետիկայի բնագավառի և սպառողների իրավունքների վերաբերյալ տպագիր նյութերի քանակը բավարար չէ և միշտ չէ, որ հասու են բնակչությանը, հանձնաժողովը պլանավորում է 2002 թվականին այդ թեմաներով հրապարակել հանրամատչելի թերթիկներ ու գրքույկներ և անհատույց բաժանել բնակչությանը: Ելնելով այն հանգամանքից, որ մատակարար-սպառող հարաբերությունները կարգավորող՝ էներգակիրների մատակարարման և օգտագործման կանոնները հաճախ պարունակում են բարդ իրավական և տեխնիկական մանրամասներ, որոնք ոչ միշտ են միանշանակորեն հասկանալի սպառողների լայն շերտերի համար, նախատեսվում է 2002 թվականին հրապարակել սպառողների իրավունքները պարզաբանող հանրամատչելի գրքույկներ:

Բավարար չեն մարզերի բնակչության իրազեկման և նրանց իրենց իրավունքների պարզաբանման աշխատանքները և անհրաժեշտ է 2002 թվականին որոշակիորեն ակտիվացնել այդ ուղղությամբ տարվող աշխատանքները:

2001 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ հանձնաժողովում ստացվել են 107 բողոք և հարցադրում, որոնցից 96-ը՝ բնակչությունից, 11-ը՝ իրավաբանական անձանցից: Դրանցում բարձրացված հարցերի վերլուծությունը ցույց է տալիս, որ մեծ մասի խնդրո առարկան, ինչպես նախորդ տարիներին, էլեկտրաէներգիայի ծախսի հավելագրումն է, հաշվառքի սարքերի ստուգման, վերանորոգման ու փոխարինման խնդիրները, մատակարարի կողմից պայմանագրային պարտավորությունների ոչ պատշաճ կատարումը: Թեև բոլոր բողոքներն ու հարցադրումները սահմանված կարգով քննարկվել են՝ ստանալով համապատասխան լուծումներ:

Հանձնաժողովը մեծ ուշադրություն է դարձնում էլեկտրաէներգիայի բաշխող ընկերությունների (ԷԲԸ) մասնավորեցման առնչությամբ տարվող բացատրական աշխատանքներին, հատկապես մասնավորեցումից հետո սակագնային մարժայի ձևավորման մեթոդաբանությանը վերաբերող:

ԷԲԸ-ի մասնավորեցման առնչությամբ արդեն ձևավորված հասարակական կարծիքի ուսումնասիրության և դրանից բխող 2002 թվականին կատարվելիք բացատրական աշխատանքների պլանավորման ու ճիշտ ուղղվածության ապահովման համար կազմվել է հասարակական կարծիքի սոցիոլոգիական ուսումնասիրության հարցաթերթիկ, որի տարածումն ու արդյունքների մշակումը պլանավորված է կատարել 2001 թվականի վերջին և 2002 թվականի ընթացքում՝ սեփական ուժերով:

Նախատեսվում է 2002 թվականին լուծել համապատասխան ԶԼՄ-ներում սեփական տեղ (սյունակ) կամ ժամ ունենալու հարցը՝ պարբերաբար լրատվություն իրականացնելու կամ բացատրական աշխատանք կատարելու համար:

## **6. Համագործակցություն**

ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովը միջազգային փորձի ուսումնասիրման, մասնագետների ուսուցման ու վերապատրաստման գործընթացները համարում է անհրաժեշտ և անընդհատ, ուստի նախատեսում է 2002 թվականին նույնպես շարունակել գործակցությունը միջազգային կազմակերպությունների և այլ երկրների կարգավորող մարմինների հետ:

Հանձնաժողովը 2002 թվականին կշարունակի մասնակցել ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության (USAID) և Կրթությամբ զարգացման ակադեմիայի (AED) կողմից կազմակերպվող տարածաշրջանային շուկայի ներդրման փորձի ուսումնասիրությանը նվիրված սեմինարներին, համարելով, որ միասնական էներգահամակարգի ստեղծումը և շուկայական հարաբերությունների ներդրումը կարող է նպաստել Հայաստանի տնտեսական առաջընթացին և տարածաշրջանի քաղաքական իրավիճակի կայունացմանը:

Հաշվի առնելով առկա հիմնահարցերը, ԷԲԸ-երի սպասվող մասնավորեցումից բխող նոր հիմնահարցերի առաջացման հնարավորությունը և դրանց լուծման անհրաժեշտությունը, սերտ հարաբերություններ ունենալով ԱՄՆ-ի Քենտուկի նահանգի Հասարակական ծառայությունների հանձնաժողովի հետ նախատեսվում է շարունակել և կատարելագործել այդ գործակցությունը նաև առաջիկայում՝ նկատի ունենալով կարգավորման բնագավառում այդ կառույցի բազմամյա փորձը:

2002 թվականին կշարունակվի նաև գործակցությունը ԱՄՆ-ի էներգետիկական ոլորտում մեծ փորձ ունեցող PA Consulting խորհրդատվական ընկերության հետ:

Նշված գործակցությունների նպատակը այլ երկրներում շուկայական հարաբերությունների ներդրումն ու մենաշնորհային բնագավառներում կարգավորող կառույցների կուտակած փորձի ուսումնասիրումն ու կիրառումն է, որոնք, որպես կանոն, տեղի են ունենում ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության, Համաշխարհային բանկի և այլ կազմակերպությունների կողմից հովանավորվող դասընթացների տեսքով:

Հանձնաժողովը 2002 թվականին կշարունակի ակտիվ գործունեությունը Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի և Եվրասիայի 15 երկրների կարգավորող հանձնաժողովների ընկերակցության շրջանակներում, որի նախագահության անդամ և սակագնային կոմիտեի նախագահ է ընտրվել ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի նախագահը:

## **7. Հանձնաժողովի գործունեության ֆինանսավորումը**

Մասնավորեցված ձեռնարկությունների տնտեսական գործունեության վրա պետական կառավարման մարմինների ուղղակի ներգործության հնարավորության նվազման հետ կաճի հանձնաժողովի դերը բնական մենաշնորհի հանդիսացող ոլորտների գործունեության կարգավորման ուղղությամբ (ծառայությունների սակագներ, լիցենզիայի պայմաններ, ֆինանսատնտեսական վերլուծություններ և այլն): Անգամ ազատ շուկայական հարաբերությունների պայմաններում բնական մենատիրությունների կարգավորման գործառույթների անհրաժեշտությունը անժխտելի փաստ է:

Հաշվի առնելով մի շարք երկրների փորձը և նպատակ ունենալով ապահովել հանձնաժողովի ֆինանսական ինքնուրույնությունը, նպատակահարմար ենք գտնում հանձնաժողովի արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները ձևավորել էներգետիկայի բնագավառի տնտեսավարող սուբյեկտների կողմից սահմանված կարգով կատարվող մասհանումների հաշվին՝ դրանով իսկ, միաժամանակ, թեթևացնելով ՀՀ պետբյուջեի բեռը: Սկզբից ևեթ նշենք, որ ելնելով հանձնաժողովի համար վերջին տարիներին նախատեսվող բյուջետային հատկացումների ծավալներից, առավել ևս՝ փաստացի հատկացումների չափից և

դրա հետագա աճի կանխատեսումից, յուրաքանչյուր տնտեսավարող սուբյեկտի կողմից կատարվող փոքրածավալ հատկացումները շոշափելի ազդեցություն չեն ունենա նրա տնտեսական գործունեության և առավել ևս՝ գործող սակագների վրա:

**ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ 2000-2002թ.թ. ՀԱՇՎԵԿՇԻՈՒՆԵՐԸ**

Ցուցանիշի անվանումը		Չափի միավոր	2000 թ. փաստացի	2001 թ. սպասվող	2002 թ. կանխատեսվող
1	Էլեկտրաէներգիայի արտադրություն	<b>մլն.կվտժ</b>	<b>5957,6</b>	<b>5899,0</b>	<b>5972,0</b>
	այդ թվում՝ ՀԱԷԿ	"-"	2005,4	2200,0	2350,0
	ՀԷԿ-եր	"-"	1260,3	1174,0	1247,0
	որից՝ Սևան-Հրազդանյան ՀԷԿ	"-"	372,6	342,0	340,0
	Որոտանի ՀԷԿ	"-"	780,7	700,0	770,0
	Չորա ՀԷԿ	"-"	50,6	67,0	67,0
	Մասնավոր փոքր ՀԷԿ -եր	"-"	56,3	65,0	70,0
	ԶԷԿ-եր	"-"	2691,9	2525,0	2375,0
	որից՝ Հրազդանի ԶԷԿ	"-"	2277,9	2195,0	1972,0
	Երևանի ԶԷԿ	"-"	414,1	330,0	403,0
2	Էլեկտրաէներգիայի ծախսը սեփական կարիքների համար	<b>մլն.կվտժ</b>	391,0	395,0	395,00
	Նույնը՝ %-ով	%	6,56%	6,70%	6,61%
3	Առաքում կայաններից	<b>մլն.կվտժ</b>	<b>5566,6</b>	<b>5504,0</b>	<b>5577,0</b>
4	Ներհոսք	"-"	352,0	350,0	350,0
5	Ընդամենը բարձր լարման էլեկտրացանցեր	մուտք	<b>5918,7</b>	<b>5854,0</b>	<b>5927,0</b>
6	Տեխնոլոգիական բարձր լարման էլեկտրացանցերում կորուստները	"-"	337,5	337,0	330,0
	Նույնը՝ %-ով 5-րդ տողի նկատմամբ	%	5,70%	5,76%	5,57%
7	Արտահոսք	<b>մլն.կվտժ</b>	814,9	800,0	800,0
8	Արտադրող կայանների տնտեսական կարիքներ	<b>մլն.կվտժ</b>	24,2	17,0	15,0
9	Առաքումը բաշխիչ ցանցեր	<b>մլն.կվտժ</b>	<b>4742,1</b>	<b>4700,0</b>	<b>4782,0</b>
10	Տեխնոլոգիական բաշխիչ ցանցերում կորուստները	<b>մլն.կվտժ</b>	539,3	535,0	535,0
	Նույնը՝ %-ով 9-րդ տողի նկատմամբ	%	11,37%	11,38%	11,19%
11	Ներքին սպառում	<b>մլն.կվտժ</b>	<b>4202,8</b>	<b>4165,0</b>	<b>4247,0</b>

Ծանոթություն. Էլեկտրաէներգիայի արտահանման, ներմուծման երկարաժամկետ պայմանագրերի բացակայության պատճառով արտահոսք-ներհոսք հաշվեկշիռը գնահատվել է նախորդող տարիների փաստացի մակարդակով:

**ՋԵՐՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ 2000-2002թ.թ. ՀԱՇՎԵԿՇԻՈՆՆԵՐԸ**

Ցուցանիշի անվանումը		Չափի միավոր	2000թ. փաստացի	2001թ. սպասվող	2002թ. կանխատեսվող
1	Ջերմային էներգիայի արտադրությունը, ընդամենը	<b>հազ.Չկալ</b>	<b>927,2</b>	<b>858,8</b>	<b>961</b>
	այդ թվում՝ ՋԷԿ-երում	"-	612,5	544,0	613
	կաթսայատներում	"-	<b>314,7</b>	<b>314,8</b>	<b>348,0</b>
2	Տեխնոլոգիական կորուստները ջերմային ցանցերում	<b>հազ.Չկալ</b>	204,7	186,4	199
	Նույնը՝ %-ով	%	<b>22,1%</b>	<b>21,7%</b>	<b>20,71%</b>
3	Ջերմային էներգիայի օգտակար առաքումը այդ թվում՝	<b>հազ.Չկալ</b>	<b>722,5</b>	<b>672,4</b>	<b>762</b>
	<i>Կենտրոնացված ջեռուցման համար</i>	"-	<b>316,23</b>	<b>306,9</b>	<b>348</b>
	ՋԷԿ-երից	"-	77,4	74,6	80
	Կաթսայատներից	"-	238,8	232,3	268
	<i>Արդյունաբերական կարիքների համար</i>	"-	406,2	365,5	414

Ծանոթություն. Կաթսայատներում արտադրվող ջերմային էներգիայի քանակությունը գնահատվել է ըստ կաթսայատների գազի կանխատեսվող պահանջարկի:



**ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ 2000-2002թ.թ. ՀԱՇՎԵԿՇԻՈՒՆԵՐԸ**

Ցուցանիշի անվանումը	Չափի միավոր	2000թ. փաստացի	2001թ. սպասվող	2002թ. կանխատեսվող
1 Բնական գազի ներկրում	մլն.մ մ <sup>3</sup>	<b>1403,0</b>	<b>1394,8</b>	<b>1456</b>
2 Տեխնոլոգիական կորուստները գազի համակարգում	մլն.մ մ <sup>3</sup>	<b>99,98</b>	<b>99,85</b>	<b>87</b>
Նույնը՝ %-ով 1-ին տողի նկատմամբ	%	<b>7,1%</b>	<b>7,2%</b>	<b>6,0%</b>
3 Գազի ծախսը սեփական կարիքների համար	մլն.մ մ <sup>3</sup>	<b>9,80</b>	<b>10,01</b>	<b>10</b>
Նույնը՝ %-ով 1-ին տողի նկատմամբ	%	<b>0,70%</b>	<b>0,72%</b>	<b>0,69%</b>
4 Մղվել է ստորգետնյա պահեստարաններ	մլն.մ մ <sup>3</sup>	<b>120,6</b>	<b>60,57</b>	<b>60,0</b>
5 Արտահանվել է պահեստարաններից	"-	<b>101,8</b>	<b>24,39</b>	<b>50,0</b>
6 Բնական գազի առաքումը սպառողներին որից՝	"-	<b>1274,4</b>	<b>1248,8</b>	<b>1349</b>
<i>Էներգետիկ համակարգ</i>	"-	884,9	855,0	820
<i>Արդյունաբերություն</i>	"-	164,3	185,1	300
<i>Բյուջետային կազմակերպություններ</i>	"-	23,6	15,2	18
<i>Կոմունալ-կենցաղային ոլորտ</i>	"-	<b>144,6</b>	<b>146,0</b>	<b>155</b>
որից՝ բնակչություն	"-	91,6	91,0	100
ջեռուցման համակարգ	"-	53,0	55,0	55
<i>Այլ սպառողներ</i>	"-	57,1	47,5	56